

ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԶԻ ԱՃԻ ԵՎ ՃԵՄԱՐՏՈՒԹՅԱՆ Կ. ՊՈՊԵՐԻ ՈՒՍՄՈՒՆԸ

Ա. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Կ. Պոպերը XX-րդ դարի ամենանշանավոր և ազդեցիկ փիլիսոփաներից մեկն է: Փիլիսոփայության, գիտության տրամաբանության, մեթոդաբանության, սոցիոլոգիայի հիմնահարցերին նվիրված նրա բազմաթիվ աշխատությունները լայն տարածում են գտել փիլիսոփայական շրջանակներում: Կ. Պոպերն իր գիտական գործունեության սկզբնական շրջանում հայտնի դարձավ որպես գիտության նեոպոզիտիվիստական մեթոդաբանության ակտիվ քննադատ: Հետագայում նրա փիլիսոփայությունը գիտական շրջանակներում ստացել է քննադատական ռեալիզմ կամ քննադատական ռացիոնալիզմ անվանումը: Նրա աշխատություններում քննադատությունն ունի դրական իմաստ, իսկ «ռեալիզմ» և «ռացիոնալիզմ» տերմիններն օգտագործվում են առողջ բանականության իմաստով: Ասենք նաև, որ Կ. Պոպերն աշխարհի տարբեր շրջաններում ունեցել է իր բազմաթիվ հետևորդները:

Մեր նպատակն է անդրադառնալ միայն գիտական գիտելիքի աճի կամ զարգացման հիմնահարցին, որը համընկնում է Կ. Պոպերի էպիստեմաբանության ըմբռնման հետ: Այդ կապակցությամբ նա գրել է. «էպիստեմաբանության կենտրոնական հիմնահարցը գիտելիքի աճի հիմնահարցն է: Իսկ գիտելիքի աճը լավ է ուսումնասիրել որպես գիտական գիտելիքի աճ»¹:

Գիտելիքի աճին նպաստող ռացիոնալ քննադատությունը, Կ. Պոպերի կարծիքով, գիտության և փիլիսոփայության միակ համարժեք մեթոդն է: Դա, ըստ Կ. Պոպերի, «հիմնահարցի պարզ առաջադրումն ու դրա տարբեր լուծումների քննադատական հետազոտությունն է»²:

Կ. Պոպերի աշխատություններում ռացիոնալ մեթոդը համընկնում է քննադատական մեթոդի հետ: Նրա կարծիքով, տեսության յուրաքանչյուր ձևակերպում, գիտելիքի ցանկացած հիմնավորում պետք է լինի բավականին քննադատական: Քանի որ դիտարկումը և բանականությունը հեղինակություն չեն, իսկ ինտուիցիան և երևակայությունը անհասանելի են, ուստի գիտական առաջընթացի միակ երաշխավորը քննադատությունն է, մեր վարկածների և տեսությունների ռացիոնալ քննադատությունը:

Գիտական գիտելիքի տրամաբանական վերակառուցման հարցում Կ. Պոպերը հանդես է գալիս ինդուկտիվ մեթոդի բացարձակացման դեմ: Նա գտնում է, որ ինդուկտիվ տրամաբանությունը չի կարող գիտական գիտելիքի աճի նկարագրման համարժեք մեխանիզմ լինել: Գիտական տեսությունը ոչ թե հեկոն-Միլլան ինդուկտիվիստական տրադիցիային հատուկ ինդուկտիվ ընդհանրացման արդյունք է, այլ ստեղծագործական հանելուկների լուծման՝ գիտնականի մտքի առանձնահատուկ պայծառացման արգասիք: Կ. Պոպերի համար նոր գիտելիքների բացահայտումը հոգեբանական գործընթաց է, իսկ դրա ապացուցումը հնարավոր է միայն տրամաբանական դեդուկցիայի տեսքով: Հետևողական դեդուկտիվիզմը նրան հանգեցնում է այն եզրակացությանը, որ գիտական տեսությունն ընդհանրապես չի կարելի հիմնավորել, այն կարելի է միայն հերքել: Եթե տեսությունը չի դիմանում ստուգմանը, այսինքն՝ հետևանքները կեղծ են լինում, ապա այն, դեդուկցիայի «մոդուս տոլենտի» կանոնի համաձայն, հերքվում է: Այստեղից Կ. Պոպերը

¹ K. R. Popper. The logic of scientific discovery. N. Y., 1959, p. 15.

² Նույն տեղում, էջ 16:

բխեցնում է, որ տեսական համակարգերը գիտական են այն դեպքում, եթե դրանք հերքելի են էմպիրիկ փաստերի կողմից: Եթե տեսության հաստատման համար պահանջվում են անսահման թվով գիտափորձեր, ինչն անհրակաճաճալի է, ապա հերքման համար բավական է թեկուզ մեկ հերքող գիտափորձ: Այսպիսով, եթե աշխարհի մասին բարձր ինֆորմատիվություն ունեցող կոառուցները՝ տեսությունները, վերը նշված պատճառներով անհնար է վերիֆիկացիայի ենթարկել, ապա դրանք հեշտությամբ կարելի է ֆալսիֆիկացիայի ենթարկել: Իսկ տեսության հերքումը թույլ է տալիս դրանցից ընտրել լավագույնը: Գիտական առաջընթացի միակ երաշխավորը, Պոպերի կարծիքով, քննադատությունն է, մեր վարկածների ու տեսությունների ռացիոնալ քննադատությունը: Ահա այս հիմնական գաղափարներն են ընկած Կ. Պոպերի գիտական գիտելիքի զարգացման էվոլյուցիոն տեսության՝ հիմքում:

Ինչպես նկատել է Է. Էգերը, դարվինիզմը Կ. Պոպերի համար միջոց էր Կառնապի ինդուկտիվիզմի դեմ պայքարելու համար¹: Սակայն Կ. Պոպերի կարծիքով, դարվինիզմը, չնայած իր արժանիքներին, այնուամենայնիվ կատարյալ չէ: Ուստի նա փորձել է սեփական խնդիրների համապատասխան վերածնակեցնել այդ ուսմունքը: Կ. Պոպերը ելակետ է ընտրել դրա նեոդարվինյան տարատեսակը: Ընդ որում, Կ. Պոպերի համար էվոլյուցիոն մոտեցումը ոչ թե պարզ համամասնություն է, այլ իմացաբանական դոկտրին: Էվոլյուցիան նա հասկանում է որպես ճկուն ղեկավարմամբ զարգացող հիերարխիկ համակարգ: «Մուտացիան» (որակական թոփշը) համարվում է պատահական փորձի և սխալի մեթոդ, իսկ «ընկան ընտրությունը»՝ սխալները վերացնելու միջոցով այն ղեկավարելու եղանակներից մեկը²: Կ. Պոպերի նպատակն այն է, որ էլիմինացիայի միջոցով կենսունակ դարձնի ընտրության մեթոդը, և գոյատևման երաշխիք ունենան միայն ուժեղ տեսությունները, ուստի նա անհրաժեշտ է գտնում առավել խստացնել դրանց գոյության պայքարը³:

Ըստ Դարվինի, գոյության պայքարում են մնում ամենահարմարվածները: Գիտելիքների բնագավառում, Կ. Պոպերի կարծիքով, այդ խնդրին հասնելու լավագույն միջոցը ֆալսիֆիկացիայի սկզբունքն է, որը հնարավորություն է տալիս գոյատևել ամենահարմարված տեսություններին: Դրա համար անհրաժեշտ է վարկածները գիտակցաբար և պարբերաբար խիստ ստուգումների ու քննադատության ենթարկել, և նրանք, ովքեր չեն դիմանա, պետք է դեն նետվեն գիտությունից, իսկ ստուգումներին դիմացած վարկածները չպետք է հույս ունենան, որ կպահպանվեն հաջորդ ստուգումների ժամանակ:

Մի կարևոր առանձնահատկություն ևս, ըստ Կ. Պոպերի, լուրաքանչյուր օրգանիզմ, փորձի և սխալի մեթոդը կիրառելով, մշտապես մասնակցում է պրոբլեմների լուծմանը, և երբ այդ լուծումները հաջողված են լինում, մեծանում է մուտանտների կենդանի մնալու հավանականությունը, և ժառանգաբար ամրապնդվում են այդ լուծումները: Կ. Պոպերի աչքից չի վրիպել օրգանիզմների ժառանգականության հարցը, սակայն նա, ելնելով իր փիլիսոփայական սկզբունքներից, միանգամայն բացառում է Հեգելի զարգացման ուսմունքի որոշակի մեկնաբանությունը՝ լոգիցիզմը, որը կարծես մերժում, չի բացատրում այդ գործընթացում առանձնահատուկի առաջացումը⁴:

Դարվինի ուսմունքի այսպիսի մեկնաբանությունը թույլ է տալիս համամասնություն, զուգահեռներ անցկացնել օրգանիզմների և գիտական տեսությունների միջև: «Փորձնական լուծումները,- գրում է Կ. Պոպերը,- որոնք կենդանիներն ու քույտերը ներառում են իրենց անատոմիայում և վարքում, տեսության կենսաբանական զուգահեռներն են, և, հակառակը, տեսությունը համապատասխանում է էնդոսմատիկ օրգաններին և դրանց ֆունկցիալ դրման եղանակին» (էջ 486):

¹ Նկատենք, որ էվոլյուցիոն պատկերացումները մինչև Կ. Պոպերը էպիստեմաբանության մեջ օգտագործել են նաև Գ. Սպենսերը, Է. Մախը և Լ. Ռոյցմանը:

² Տե՛ս Է. Զեթ, *Динамика теорий и фазовые переходы*, «Вопросы философии», 1995, № 10, էջ 39:

³ Տե՛ս Կ. Փոլլեր, *Логика и рост научного знания*, М., 1983, էջ 538-539: Այս աշխատությունից մեջբերումների հղումներն այսուհետև կտրվեն տեքստում՝ նշելով էջախմբերը:

⁴ Տե՛ս Կ. Փոլլեր, *Objective knowledge. An evolutionary approach*, Oxford, 1972, էջ 193:

⁵ Ավելի մանրամասն տե՛ս Գ. Ա. Գեջորկյան, *Очерк исторической методологии науки*, Ер., 1987, էջ 82-91:

«Ինչպես տեսությունները,- շարունակում է նա,- այնպես էլ օրգանիզմները և դրանց ֆունկցիաները ժամանակավոր հարմարեցում են մեր ապրած աշխարհին: Դրանք երկուսն էլ պրոբլեմներ են լուծում, իսկ էվոլյուցիայի արդյունքում նոր օրգանների և վարքի առաջացումը կարող է ստեղծել նոր պրոբլեմներ» (էջ 486): Կյանքը, գտնում է Կ. Պոպերը, զարգանում է գիտական հետազոտության մասն հին պրոբլեմներից դեպի նոր, անսպասելի պրոբլեմների առաջացումը: Դա արարման, հայտնագործության և ընտրության գործընթաց է: Վերջինս նա անվանում է էմերջենտության տեսություն⁷: Բառի բացատրությունը ևս հուշում է, որ Կ. Պոպերն իր փիլիսոփայության հիմնական սկզբունքներով հակադրվում է Հեգելի լոգիցիզմի ըմբռնմանը և փիլիսոփայական որոշակի ուղղությունների առաջ քաշած տեսությունների միջև կունույատիվության կապի գոյությանը: Նա լավ հասկանում էր, որ եթե նույն բնագավառի տեսություններից մեկը ժամանակի մեջ անմիջապես, ամբողջովին պայմանավորեք հաջորդ տեսությունը, ապա մենք կկարողանայինք կանխատեսել ցանկացած տեսական կառուցվածքը կամ տեսությունների փոխանցման օրինաչափ կարգը: Սակայն, ինչպես օրգանիզմները, այնպես էլ տեսությունները, որքան էլ պայմանավորված լինեն իրենց ծնողներով, իրենց նախորդած տեսություններով, այնուամենայնիվ ինքնուրույն ամբողջներ, արարման, ստեղծագործության արդյունքներ են: Ելնելով այսպիսի ըմբռնումից՝ էմերջենտության աստիճանները հանգեցնում են զարգացման նոր մակարդակների. նոր պրոբլեմների, որոնք լուծվում են տարբեր եմթադրությունների, կոահումների, վարկածների առաջադրմամբ և խիստ քննադատաբար փորձարկմամբ ու ստուգմամբ սխալները, ոչ համարժեքները վերացնելով (էջ 529):

Նոր վարկածին, տեսությանն առաջադրվող ամենահիմնական պահանջն այն է, որ պետք է լուծի առաջադրված հարցերը, հիմնահարցերը: Սակայն այդպիսիք կարող են լինել բազմաթիվ մրցակից վարկածները, տեսությունները: Բնականաբար հարց է առաջանում, թե վարկածներից ո՞րն է գերադասելի, արդյոք կա՞մ վարկածների, տեսությունների համեմատական գնահատականներ, դրանցից առավել լավն ընտրելու հնարավորություն: Այդ հարցն անմիջականորեն կապված է գիտելիքի ճշմարտության որոշակի ըմբռնման հետ: Չէ՞ որ գիտական տեսությունների աճը, զարգացումն ինքնապատակ չէ: Կ. Պոպերն առաջադրում է վեց պայման, որոնցով նոր է տեսությունը կարելի է համեմատել հին է տեսության հետ, իսկ նոր տեսությունը գերազանցում է իր բնագավառի ավելի հին տեսությանը: Դրանք հետևյալն են.

1) է տեսությունն անում է ավելի ճշգրիտ պնդումներ, քան է-ը, իսկ դրանք դիմանում են ավելի ճշգրիտ ստուգումներին:

2) է տեսությունը հաշվի է առնում և բացատրում ավելի մեծ թվով փաստեր, քան է-ը:

3) է տեսությունը փաստերը նկարագրում և բացատրում է ավելի մանրամասն, քան է-ը:

4) է տեսությունը դիմացել է այն ստուգումներին, որոնց չի դիմացել է-ը:

5) է տեսությունն առաջարկում է նոր փորձարարական ստուգումներ, որոնք, մինչև դրա ի հայտ գալը, չեն քննարկվել. է-ը դիմացել է այդ ստուգումներին:

6) է տեսությունը միավորում կամ կապում է այնպիսի տարբեր պրոբլեմներ, որոնք, մինչև դրա ի հայտ գալը, միմյանց հետ կապեր չեն ունեցել (էջ 351-352):

Նկատելի է, որ տեսությունների համեմատական գնահատման Կ. Պոպերի մոտեցման հիմքում ընկած է դրանց բովանդակությունների համեմատականությունը, առավել հարուստ, ինֆորմատիվ լինելը, ստուգումների հնարավորությունը, ճշգրտությունը:

Ըստ այդմ փիլիսոփան կազմում է տեսությունների ճշմարտության որոշման մի պարզ սխեմա: Այդ կապակցությամբ Կ. Պոպերը գրում է. «Եմթադրելով, որ է₁ և է₂ երկու տեսությունների ճշմարիտ և սխալ բովանդակությունները համեմատելի են, կարելի է պնդել, որ է₂-ը մոտ է ճշմարտությանը կամ ավելի լավ է համապատասխանում փաստերին, քան է₁-ը, եթե առկա է երկու պայմաններից թեկուզ մեկը.

ա) է₂-ի ճշմարիտ և ոչ սխալ բովանդակությունը գերազանցում է է₁-ի ճշմարիտ բովանդակությանը,

⁷ Emergent – անզերեմ բառ է, ճշանակում է հանկարծակի, անսպասելի, չնախատեսված:

բ) t_1 -ի սխալ և ոչ ճշմարիտ բովանդակությունը գերազանցում է t_2 -ի սխալ բովանդակությունը» (էջ 353), որից բխում է α -ի ճշմարտամասնության չափը՝ $V_S(\alpha)$:

Այն հանգում է α -ի ճշմարիտ բովանդակության չափի՝ $C_{t_1}(\alpha)$ -ի և α -ի սխալ բովանդակության չափի՝ $C_{t_2}(\alpha)$ -ի տարբերությանը $V_S(\alpha) = C_{t_1}(\alpha) - C_{t_2}(\alpha)$:

Բնականաբար հարց է առաջանում, թե ինչպե՞ս տարբերել ճշմարիտ և հարուստ բովանդակությամբ վարկածները, տեսությունները համեմատաբար ավելի աղքատիկ և սխալ բովանդակություն ունեցողներից: Հարցը կրկին հանգում է նոր՝ t_2 տեսության և Քիմ՝ t_1 տեսության համեմատական գնահատմանը, այսինքն՝ գիտական գիտելիքի աճի, զարգացման, առաջընթացի գնահատմանը: Ինչպես տեսնում ենք, Կ. Պոպերի գիտական գիտելիքի աճի, առաջընթացի և գիտական գիտելիքի ճշմարտության գնահատականները համընկնում են: Իր փիլիսոփայական գործունեության ավելի ուշ շրջանում այդ գնահատականները ձևակերպվում են երեք պահանջների տեսքով: Ըստ առաջին պահանջի՝ նոր տեսությունը պետք է ելակետ ընդունի պարզ, նոր, արդյունավետ և միավորող գաղափարը: Այսինքն՝ նոր վարկածը կամ տեսությունը պետք է բացատրի ինչպես իր առջև ծառայած, այնպես էլ նախկին տեսության բացատրած փաստերը: Ինչպես նաև այն փաստերը, որոնք ֆալսիֆիկացիայի էին ենթարկվել այդ բնագավառի համեմատաբար հին տեսության կողմից: Միաժամանակ, նոր տեսությունը պետք է հնարավորինս ազատվի ad hoc վարկածներից և միավորի նախկին տեսությունները:

Երկրորդ պահանջի համաձայն՝ նոր տեսությունը պետք է լինի անկախ ստուգելի: Ըստ Կ. Պոպերի, դա նշանակում է, որ այդ տեսությունը բացի այն, որ պետք է բացատրի փաստերը, միաժամանակ պետք է ունենա այնպիսի ստուգելի հետևանքներ, որոնք կբերեն մինչ այդ չդիտարկված երևույթների կանխատեսմանը: Երկրորդ պահանջի իրականացումը, տեսությունը՝ որպես հետազոտության միջոց, դարձնում է ինչ-որ չափով ավելի արդյունավետ: Վերջինս հանգեցնում է նոր էքսպերիմենտների, որոնք եթե նույնիսկ անմիջականորեն հերքեն այդ տեսությունը, այնուամենայնիվ կապահովեն գիտելիքների աճ՝ ֆակտուալ գիտելիքը կաճի էքսպերիմենտների անսպասելի արդյունքների շնորհիվ: Դրանք մեզ կառաջադրեն նոր պրոբլեմներ, որոնք կլուծվեն նոր տեսությունների կողմից: Գիտական տեսությունը պետք է բավարարի նաև երրորդ պահանջը: Այն պետք է դիմանա նոր և առավել խիստ՝ մագիիկ ստուգումներին (էջ 364):

Անշուշտ, տեսությունը կարող է և հերքվել: Այդ իրողությունը Կ. Պոպերը դարձնում է իր տեսության անկյունաքարը, ինդուկտիվիզմին հակադրվելու հիմնական միջոցը: Վարկածի, տեսության յուրաքանչյուր հերքումը նա մեծ հաջողություն է համարում ոչ միայն այն գիտնականի համար, որը հերքում է տեսությունը, այլև այն գիտնականի, որն ստեղծել է հերքվող տեսությունը: Եվ կարևոր չէ, թե հերքումը տեղի է ունենում տեսության ստեղծումից վեց ամիս, վեց տարի կամ վեց դար հետո. դա զուտ պատմական պատահականություն է: Կարող է նույնիսկ այնպիսի վարկած լինել, որն անմիջապես հերքվի և հետքն անգամ չմնա:

Կ. Պոպերի, նրա հետևորդների և մեկնաբանների բազմաթիվ հողվածներից կարելի է այն տպավորությունը ստանալ, որ գիտության առաջընթացում նրա համար կարևոր, թերևս միակ իրողությունը վարկածների, տեսությունների հերքման՝ ֆալսիֆիկացիայի փաստն է: Այսպես, Ջ. Ագասին «Գիտությունը շարժման մեջ» հողվածում, բարձր գնահատելով Կ. Պոպերի հերքման, ֆալսիֆիկացիայի սկզբունքը, գտնում է, որ դրա հետ է կապված գիտության առաջընթացի հնարավորությունը՝:

Ֆալսիֆիկացիայի սկզբունքն առավել լավ ձևակերպված է Կ. Պոպերի ասույթներից մեկում. «...Ֆալսիֆիկացիայի չափանիշն ասում է, որպեսզի ասույթը կամ ասույթների համակարգը համարենք գիտական, դրանք պետք է ընդունակ լինեն ընդհարվելու հնարավոր կամ մտացածին դիտարկումների հետ» (էջ 249):

Նշանակում է, որ այս ասույթը, ասույթների համակարգերը, վարկածները, տեսությունները պետք է ունենան ոչ թե անսահման, այլ ընդգծված, առանձնացված, սահմանափակ

՝ Տե՛ս «Структура и развитие науки», М., 1978, էջ 121-160:

ինՖորմատիվ բովանդակություն: Այսինքն՝ դրանք պետք է սկզբունքորեն հերքելի լինեն այլ, թեկուզ հնարավոր կամ մտացածին բովանդակության կողմից: Այս մտեցմամբ Կ. Պոպերի ֆալսիֆիկացման, հերքման սկզբունքը եթադրում է, որ գիտության տվյալ բնագավառի աճը իրենից ներկայացնում է մեկը մյուսի կողմից հերքվող, այսինքն՝ նախորդով չպայմանավորված ինքնուրույն բովանդակություն ունեցող վարկածների, տեսությունների հաջորդափոխվող շարք, որտեղ ամեն մի հաջորդ տեսության ինՖորմատիվ բովանդակություն իր պարզությամբ, արդյունավետությամբ, միավորող կարողությամբ, ստուգվածությամբ, խստությամբ, բացատրության և կանխատեսման աստիճանով ավելի է, քան նախորդը: Այստեղից հետևում է Կ. Պոպերի այն եզրակացությունը, որ ճշմարտությունը ռեգուլյատիվ գաղափար է: Սակայն իր գործունեության ավելի ուշ շրջանում Կ. Պոպերը փորձել է հավասարակշռել իր դիրքորոշումը: Նա հասկացել է, որ եթե ընդունում ենք գիտության առաջընթացի անընդհատականությունը և ռացիոնալությունը, ապա անհրաժեշտ են ոչ միայն հաջողված հերքումներ, այլև դրական հաջողություններ: Նշանակում է՝ մենք պետք է ստեղծենք այնպիսի տեսություններ, որոնցից բխում են նոր կանխատեսումներ, անհայտության մեջ նոր մվաճումներ և նախկինում չստանձված նոր ստուգելի հետևանքներ: Այդօրինակ նոր կանխատեսումները, գտնում է Կ. Պոպերը, պետք է ոչ միայն ձևակերպվեն, այլև, եթե ընդունում ենք գիտության առաջընթացի անընդհատականությունը, պետք է նաև բավականին հաճախ ամրապնդվեն փորձնական տվյալներով (էջ 368):

Մենք հաջողության կարիք ունենք, մեր որոշ տեսություններն էմպիրիկ ամրապնդման կարիք ունեն, թեկուզ այն բանի համար, որ ճիշտ գնահատենք հաջողված և ոգևորող հերքումները: «Ինձ համար միանգամայն ակնհայտ է այն, որ միայն մեր տեսությունների այդ ժամանակավոր հաջողությունների շնորհիվ կարող ենք բավարար հիմքով հերքել տեսական լաբիրինթոսի որոշակի կողմերը» (էջ 369):

Իր փիլիսոփայական համոզմունքների տեսանկյունից բավականին անսպասելի է Կ. Պոպերի հետևյալ ասույթը. «Հերքվող տեսությունների անընդմեջ հաջորդականությունը մեզ շուտով կտանի փակուղի և կխլի ցանկացած հույս. մենք կկորցնենք մեր տեսությունների կամ մեր ելակետային գիտելիքի այն մասերի հայտնաբերման բանալին, որոնց ժամանակավորապես կարող ենք վերագրել այդ տեսությունների ձախողման մեղքը» (էջ 369): Բանն այն է, որ, ինչպես ասել ենք, նրա շատ աշխատություններից և ասույթներից այն տպավորությունն ենք ստանում, թե նա, հակադրվելով ինդուկտիվիստական փիլիսոփայության կողմնակիցներին, ընդունում է միայն դրույթների, վարկածների, տեսությունների ֆալսիֆիկացման, հերքման իրողությունը: Սակայն, ինչպես երևում է բերված ասույթներից, գիտական գործունեության ավելի ուշ շրջանում Կ. Պոպերն իր ընդգծված դեդուկտիվիզմը փորձել է լրացնել ինդուկտիվիզմով: Այդ կապակցությամբ նա գրում է. «Նախկինում ես համարում էի, որ գիտությունը հետ կմնա իր զարգացումից և կկորցնի իր էմպիրիկ բնույթը, եթե դադարի հերքում ստանալ: Այժմ մենք տեսնում ենք, որ մասնապատճառներով գիտությունը հետ կմնար իր զարգացումից և կկորցներ իր էմպիրիկ բնույթը, եթե դադարեր նոր կանխատեսումների վերիֆիկացիա ստանալ...» (էջ 369):

Այնուամենայնիվ, Կ. Պոպերն այդ գաղափարը չի զարգացնում: Նրա գիտական գիտելիքի աճի, զարգացման գործընթացից դուրս են մնացել դրա անընդհատականության, ժառանգականության, ներքին օրինաչափ կարգի, կառուցվածքի հարցերը: Միշտ է, գիտական գիտելիքի աճը միակողմանի, ուղղագիծ, տրամաբանորեն ծավալվող կոմպլեքսիվ գործընթաց դիտելը քննադատելի է, սակայն դա չի նշանակում, թե նրանում ընդհանրապես բացակայում է օրինաչափ կարգը: Այդ իմաստով գիտական տեսության գնահատման համար իր տեղն ունի պատմական հիմնավորվածությունը: Յուրաքանչյուր գիտելիք ինչ-որ հիմքերով պարտական է իր նախորդ գիտելիքներին: Միաժամանակ գիտական գիտելիքի աճի, զարգացման Կ. Պոպերի մոդելում չի կարևորվել գիտության համար հարաբերականորեն արտաքին այնպիսի գործոնների դերը, ինչպիսիք են աշխարհի գիտական պատկերը և սոցիալ-մշակութային համատեքստը: Այդ իմաստով գիտական գիտելիքի զարգացման գործընթացը կարելի է ներկայացնել հարաբերականորեն անկախ բաց և փակ համակարգերի տեսքով: Ընդ որում, գիտության աճը բաց է երկու իմաս-

տով. այն մի կողմից ուղղված է աշխարհի գիտական պատկերը, սոցիալ-մշակութային, աշխարհայացքային համատեքստը, մյուս կողմից տվյալ բնագավառի էմպիրիկ իրականությունը ներկայացնելուն: Գիտության զարգացումը հարաբերականորեն փակ է այն իմաստով, որ ժամանակի ընթացքում միմյանց հաջորդափոխող տեսություններին բնորոշ է ոչ միայն հարաբերական անկախ, ամբողջական բովանդակությունը, այլև դրանց միջև որոշակի կալուն կապերի, հարաբերությունների գոյությունը: Յուրաքանչյուր նոր տեսություն ինչ-որ իմաստով, որոշակի հիմքերով պատմականորեն պայմանավորված է նախորդ տեսությամբ: Մասնավորապես կարելի է հիշատակել Էյնշտեյնի հարաբերականության մասնավոր և ընդհանուր տեսությունների ու քվանտային մեխանիկայի տեսության նյութական մեխանիկայով պայմանավորված լինելու փաստը: Դա ամենևին էլ չի նշանակում, որ հիշատակված տեսությունները չունեն իրենց ինքնուրույնությունը, ինֆորմատիվ, իմաստային բովանդակային ամբողջությունը: Մի բան, որ իր աշխատություններում շեշտել է Կ. Պոպերը:

Այդ տեսակետից հետաքրքիր են մեր առաջադրած վարկածի և տեսության համեմատական գնահատականները, որոնք կարելի է համարել նաև գիտության առաջընթացի, ճշմարտության համեմատական գնահատականներ: Դրանք են.

1) Գիտական տեսության ներկառուցվածքային հիմնավորվածությունը: Այդ թվում գիտելիքին ներկայացվող անհակասականության, լրիվության, անկախության, ճշգրտության, կարգավորվածության, պարփակության, ամբողջականության, ավարտվածության, ինքնաբավության, պարզության, ակնհայտության, ճշգրտության պահանջների միասնությունը⁹:

2) Գիտական տեսության էմպիրիկ հիմնավորվածությունը, այդ թվում վերիֆիկացիայի և ֆալսիֆիկացիայի սկզբունքներին բավարարելը¹⁰:

3) Գիտական տեսության պրակտիկ հիմնավորվածությունը, այսինքն՝ տեսության հանրագումարային, բացատրման, կանխատեսման, կիրառման և այլ գործառնությունների արդյունավետությունը¹¹:

4) Գիտական տեսության տեսական հիմնավորվածությունը տվյալ ժամանակաշրջանի միջտեսական հարաբերությունների և աշխարհի գիտական պատկերի, սոցիալ-մշակութային համատեքստի, աշխարհայացքի մեջ ներգծվածության աստիճանը¹²:

5) Գիտական տեսության պատմական հիմնավորվածությունը, որը քննարկեցինք ներկա հոդվածում:

Եթե համեմատենք տեսություններին Կ. Պոպերի և մեր տված գնահատականները, ապա կտեսնենք, որ վերջիններս ավելի լրիվ, ամբողջական ու համակարգված են: Այդ առումով ավելի իրատեսական է նաև գիտության զարգացման մեր մոդելը: Եվ եթե, ի տարբերություն Կ. Պոպերի, գիտական տեսությունը համարենք ճշմարիտ գիտելիք, ինչպես արել ենք մեր վերը նշված հոդվածներում, ապա ճշմարտությունը ոչ միայն ռեգուլյատիվ գաղափար է, այլև սոցիալ-մշակութային, «լսարանային» ծանրաբեռնվածություն ունի: Այդ իմաստով, կարծում ենք, ժամանակակից գիտության պատկերացումներն ավելի լավ են արտահայտում այն փիլիսոփայական ուսմունքները, որոնք փիլիսոփայության մեջ ներմուծել են հարաբերական և բացարձակ ճշմարտության գաղափարները: Այդ դեպքում նույն ճշմարիտ գիտելիքը կարող է դիտարկվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի և ապագայի տեսանկյունից: Տվյալ «լսարանում», սոցիալ-պատմամշակութային համատեքստում ճշմարիտ ճանաչված գիտելիքը ժամանակի մեջ իրեն հաջորդող «լսարանում», սոցիալ-պատմամշակութային համատեքստում կարող է դառնալ հարաբերականորեն

⁹ Տե՛ս Ա. Ս. Ղազարյան, Գիտական ճշմարտության ներկառուցվածքային չափանիշների հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2001, № 1, էջ 111-119:

¹⁰ Տե՛ս Ա. Ս. Ղազարյան, Գիտական գիտելիքի համոզականության չափանիշները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1991, № 3, էջ 182-191:

¹¹ Տե՛ս Ա. Ս. Ղազարյան, Գիտական տեսության պրակտիկ հիմնավորվածությունը որպես գիտելիքի ճշմարտության չափանիշ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2000, № 2, էջ 93-99:

¹² Տե՛ս Ա. Ս. Ղազարյան, Գիտական տեսության տեսական հիմնավորվածությունը որպես ճշմարտության չափանիշ, Եր., 2001, էջ 157-175:

ճշմարիտ: Քանի որ ժամանակի մեջ «լսարանը», սոցիալ-պատմամշակութային համատեքստը բաց են, ուստի տվյալ գիտելիքի բացարձակ, հնարավոր բոլոր «լսարանների», սոցիալ-պատմամշակութային համատեքստերի համար գիտելիքի բացարձակ հիմնավորվածություն և համոզականություն գտնելու հարցը վերածվում է իդեալի, նպատակի, ռեզոլյատիվ գաղափարի, որին կարելի է անընդմեջ ձգտել, բայց երբեք չհասնել:

Միաժամանակ, եթե գիտական ճշմարտությունը հասկանանք որպես իրականությանը գիտելիքների այնպիսի համապատասխանություն, որը բավարար հիմնավորված է, համընդհանրական և անհրաժեշտ, համոզիչ տվյալ «լսարանում», ապա ճշմարտության այնպիսի հայտնի մոտեցումներ, ինչպիսիք են դասականը, կոհերենտությունը և պրագմատիստականը, կլինեն ոչ թե հակադիր, այլ փոխլրացնող ուսմունքներ, ինչը և ցույց ենք տվել մեր հոդվածներում¹¹:

А. С. КАЗАРЯН - Учение К. Поппера о росте научного знания и истине. - В статье рассматривается учение К. Поппера о росте научного знания и истине, которое совпадает с его эпистемологией. Автор статьи в дополнение к сравнительным оценкам, данным К. Поппером научным теориям предлагает новые оценки. Ими являются внутринаучное, эмпирическое, теоретическое, практическое и историческое обоснование научной теории. Исходя из этих оценок, делается вывод, что если истину понимать как такое соответствие знаний действительности, которое достаточно обосновано, носит всеобщий и необходимый характер, убедительно для данной «аудитории», то в этом случае такие известные подходы к истине, каковыми являются классический, когерентный и прагматический, становятся не противоположными, а взаимодополняющими учениями.

¹¹ Տե՛ս Ա. Ս. Ղազարյան, Հարաբերական և բացարձակ ճշմարտություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 1999, № 1, էջ 9-14: